— Պատրիարքարանէն

«Կրօնական Ժողովն Ազգային կեդր. վարչութեան ի բուժումն գայթակղեալ մտաց հայ ժողովրդեան հարկ և արժան կը դատի տալ ի հրատարակութիւն Վանայ գաւառին 12 քահանայից մի հերքմնագրոյն վաւերական պատճէնն, որ հետեւեալն է.

«Ամենապատիւ Սրբազան պատրիարք Հայր՝ Նախագահ կեդրոնական ժողովոյ կեդրոնական վարչութեան

ի Կ. Պոլիս.

«Ստորագրեալ քահանայքս՝ Արեւելք Օրագրի 744 թուոյն մէջ Վանեցի երից քահանայից ի հռոմէականութիւն դիմելու վերաբերութեամբ անհիմն հրատարակութիւն մը տեսնելով՝ պարտք համարեցինք հերքել այն լուրը, յայտարարելով, որ Վանայ քահանայից մէջ գիտելի և լսելի իսկ եղած չէ ի կրօնափոխութիւն դիմելու այդպիսի գաղափար մը.»

«Վասն որոյ ի միամտութիւն ժողովրդեան և ի պատիւ քահանայական դասուն, փութացինք զայս հերքման գիր ուղղել առ Ձերդ բարձրաշնորհ սրբազնութիւն. խնդրելով տնօրինել որ ինչ արժանն է».

Հոգեւոր պաշտօնէայք Հայաստանեայց լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ որ է ի Վան. Դիոնէսիոս քահանայ. Յակոբ քահանայ, Կոմիտաս քահանայ Կունէյեանց Նորշէնու, Պօղոս քահանայ սուրբ Վարդանայ, Յովհաննէս քահանայ Աւանոց, Սարգիս քահանայ սուրբ Սահակայ. Մանուէլ քահանայ սուրբ Պօղոսայ, Յակոբ քահանայ, Յովհաննէս քահանայ Հայկավանից, Կարապետ քահանայ սուրբ Վարդանայ, Պետրոս քահանայ Արալուց. Արիստակէս քահանայ սուրբ Նշանայ.

Վերոյիշեալ ստորագրութեանց անկեղծութեանը համար վկայելով կը ստորագրեմ

Առժամանակեայ Առաջ. Տեղապահ Վանայ
Յովհաննէս վարդապետ Մաժակունի

1886, Յուլիս 15
Առաջնորդարան Հայոց ի Վան.

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ,

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 1 Օգոստոսի ընդ համարաւ 415 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան արականաց և միադասեան օրիորդաց Հայոց Շամախւոյ պատուելիք՝ Հայրապետ բէկն Մարտամեանց, Ստեփան բէկն Գեօզչյեանց, Աղէքսանդրն Զաքարեանց, Շահնշահն Վլասեանց և Յովհաննէսն Խալաթեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 10 Օգոստոսի ընդ համարաւ 427 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկ-

*գասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազէտ քաղաքի բարեկրօն Գրիգոր քահանայն Բաբեօխեանց և Զօհրապն Ադամեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի ազգիս ի* 12 *Օգոստոսի ընդ համարաւ* 431 *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական երկդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Բագուայ քաղաքի պատուելիքն՝ Քրիստափորն Սարգսեան Անտոնեանց Մկրտիչն տէր Յովհաննիսեան Կարապետեանց Պետրոսն տէր Բաղդասարեան տէր Մարկոսեանց և Աւետիսն Բալայեան Ղուկասեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի ազգիս ի* 12 *Օգոստոսի ընդ համարաւ* 432, *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Դարբանդ քաղաքի պատուելիքն՝ Խաչօտկն Բաբայեանց, Յովսէփն Ուշարեանց, Մկրտիչն Պապոյեանց և Աստուածատուրն Ազատեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի Ազգիս ի* 12 *Օգոստոսի ընդ համարաւ* 433 *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Մատրասայ գեղջ Շամախւոյ վիճակին բարեկրօն Յարութիւն քահանայն Թարվերտեանց և պատուելիքն՝ երեցփոխան Աղասին Գրիգորեան Ագրիեանց, Սամուէլն Մարութեան Դուգարեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի ազգիս ի* 16 *Օգոստ. ընդ համարաւ* 437 *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց քաղաքամասին Երևանայ՝ Նորգայ պատուելիքն՝ Գրիգորն Ամիրեանց, Յովհաննէսն Գալստեանց Պաւլին Օհանպապեանց և Թէոսն Խաչատրեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի ազգիս ի* 21 *Օգոստոսի ընդ համարաւ* 445 *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական երկդասեան օրիորդական Ս. Գայիանեան ուսումնարանի Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցւոյ Երևանայ պատուելիքն՝ Առաքելն Աֆրիկեանց, Արշակն տէր Մարուքեանց, Միքայէլն Աթանասեան, Զաքարիայն Գէորգեանց և Համբարձումն Եղիազարեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի ազգիս յ*30 *Օգոստ. ընդ համարաւ* 461 *հաստատեցաւ ի պաշտօն տեսչութեան Թեմական Դպրոցի Հայոց Երևանայ վիճակի յարգելի Աբիսողոմն Յովհաննիսեանց.*

—

*Կոնդակաւ Վ.ե.Հ. Հայրապետի յ*30 *Օգոստ. ընդ համարաւ* 463 *հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան արականաց ուսումնարանի Հայոց Դուրա քաղաքի պատուելիք՝ Կոլէժսկի յ*

Ռեգիստրատոր Ահարոն բէկն Յովհաննէս բէկեան Ղասապեանց, Կոլլէժսկիյ Ասեսոր Բախիշ բէկն Խոսրովբէկեան Մարտամեանց, Յարութիւնն տէր Գրիգորեան Մելիք Գաղայեանց, և Նիկոլայն Բարայեան Բահաթրեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 519. հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Վլադիկաւկազ քաղաքի պատուելիք՝ Սարգիսն Կիրակոսեանց, Յովհաննէսն Տէրտէրեանց, Յովհաննէսն Մամուլեանց, Գրիգորն Թաթուլեանց, Վարդանն տէր Աստուածատրեանց և Պօղոսն Լիսիցեանց։

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 520 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Արմաւիր աւանի պատուելիք՝ Ղուկասն Ազգիմեանց, Գէորգն Ասլանեանց, Պօղոսն Շիրինեանց, Մելքոնն Սեփերեանց, Գէորգն Ալլահվիրտեանց և Առաքելն Դաւթեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 521 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Եկատերինօդար քաղաքի պատուելիք՝ Պետրոսն Յովակիմեան Կարապուլեանց, Ղազարոսն Ասլանեան Թորոսեանց, Մկրտիչն Գէորգեան Խոչեանց Յովհաննէսն Ծերոնեան Թամազեանց, Յովհաննէսն Գէորգեան Բաղչասարայցեանց և Յակովբն Պօղոսեան Մեհանաձեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 522 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Ս. Խաչ քաղաքի բարեկրօն Գէորգ քահանայն Աղայեանց և պատուելիք՝ Կարապետն Քոլխայեանց, Հայրապետն Ունանեանց, Յակովբն Ռամազանեանց, Մեսրովբն Ղազարեանց և Յովնանն Աղայեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 523 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Ղզլար քաղաքի պատուելիք՝ բժիշկ Ռոմանոսն Միշվելեանց, բժիշկ Գէորգն Կաճկաճեանց, Աստուածատուրն Կաճկաճեանց, Սիմէօնն Իզմիրեանց, Յովհաննէսն Քուչուբէկեանց և Մելքոնն Մամաջանեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 524 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Մոզդոկ քաղաքի պատուելիք՝ Մակարն Յովհաննիսեան Ալուխանեանց, Գրիգորն Խաչատրեան Լիսիցեանց, Յովհաննէսն Յարութիւնեան Գանջումեանց, Յովհաննէսն Յակովբեան Ս-

լուխանեանց, Խաչատուրն Պօղոսեան Գանջումեանց և Կարապետն Յովհաննիսեան Եարալեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 525 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արական ուսումնարանի Հայոց Թեմիրխանշուրա քաղաքի պատուելիք՝ Պետրոս Սարգսեանց, Յարութիւնն Պետրոսեանց, Դրաստամն Վարդանեանց, Մատթէոսն Օրբէլեանց, Սարգիսն Քալանթարեանց և Համբարձումն Տուրփայեանց։

—

Կոնդակաւ Վ.եհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտ. ընդ համարաւ 526 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Ստաւրապօլ քաղաքի բարեկրօն Գէորգ քահանայն Զաքարեանց և պատուելիք՝ երեցփոխան Դաւիթն Բարգուղիմէոսեան Պօպովեանց, Գէորգն Սաղաթիէլեան Թիւթիւնճեանց, Մարտիրոսն Յովհաննիսեան Գիւլնազարեանց և Քերովբէն Կարապետեան Տիտրեանց։

—

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան ի 28 Օգոստ. ընդ համարաւ 456 շնորհեցաւ Շամախեցի պատուելի Գէորգայ Յովհաննիսեան Քալանթարեանց, վասն նպաստամատոյց լինելոյ նորա ի զանազան ժամանակս շինութեան աւագ եկեղեցւոյ, և օրիորդաց ուսումնարանի Շամախւոյ և Ս. վանիցն Սաղիանու ևս վասն նպաստելոյ ծախուց Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյս և Թեմ. դպրոցին Շամախւոյ մերձ 2600 ռուբլեաց նուիրաբերութեամբ։

—

Կոնդակ օրհնութեան ի 6 Սեպտ. ընդ համարաւ 478, շնորհեցաւ պատուամեծար քաղաքացւոյ Մոզդոկ քաղաքի բարեպաշտօն Պետրոսի Սահակեան Գեանջումեանց և բարեպաշտուհի Տիկնոջն Նունեայ Յովհաննիսեան, որով ըստ ցանկութեան հայազգի ժողովրդոց քաղաքի և միջնորդութեան Գեր. Կառավարչի վիճակին Աստրախանայ շնորհեցաւ նոցա կոչումն պատուաւոր Հոգաբարձուի և մշտնջենական խնամակալի Ս. Նունէեան օրիորդական ուսումնարանի տեղւոյն կառուցելոյ սեպհական ծախուք իւրեանց։

—

Կոնդակ օրհնութեան ի 25 Սեպտ. ընդ համարաւ 524, յանուն Բագուաբնակ Աղա Ղազարոսի Յովհաննիսեան Մայիլեանց, վասն բերել տալոյ ի սրահ Ս. վանիցն Գանձասարու զաղբիւր ջրոյ և ձեռնարկելոյ ի վերանորոգութիւն նոյն վանից սեպհական ծախուք իւրովք և օժանդակութեամբ բարեսէր ազգայնոց։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.